МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

ք. Երևան **06.09.2024թ.**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/152»

(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին)

ՊԱՐԶԵՑ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից 2024 թվականի հուլիսի 4-ին տեղեկագրում (www.gnumner.am) հրապարակվել է համակարգչային տեխնիկայի ձեռքբերման «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/152» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացվել նաև Ա/Ձ Լուսիա Պետրոսյանի (ՀՎՀՀ՝ 74435455) և Ա/Ձ Արթուր Հարությունյան Սերյոժայի (ՀՎՀՀ՝ 27959977) կողմից (այսուհետ՝ Ընկերություններ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 3-րդ նիստի արձանագրության 5.2-րդ և 5.3-րդ կետերով Ընկերությունների կողմից ներկայացված հայտերի փաթեթներում արձանագրվել են մի շարք թերություններ, իսկ 6-րդ կետով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետը, Ընկերություններին տրվել է մեկ աշխատանքային օր ժամանակ՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով, սակայն սահմանված ժամանակահատվածում արձանագրված թերությունները պատշաճորեն չեն շտկվել, ինչը մանրամասնորեն ամրագրվել է նույն արձանագրության 7.1 և 7.2 կետերում: Հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը վերջիններիս հայտերը գնահատվել են անբավարար և մերժվել են:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն «մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ **գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը**, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ **գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը** և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը»:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը.

ՈՐՈՇԵՑ

Ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ սույն որոշումը կայացվելուն օրվան հաջորդող օրն այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակիցներին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ
ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ՝ Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ